ՏԱՂ Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ

(ԿԵՆԿԱՊ)

Կայր կոյսն 'ի յայրին
Կայր և զուարճանայր.
Կամէր ծնանել
Զկիանս ազգի մարդկան։
Կոյսն ծնանէր
Զկեանս ազգի մարդկան
Զէակիցքն Հօր,
Զօրհնեալ կենսատու Փրկիչն։

Կայծակնատեսիլ
Կարմրացայտ ամպոյն,
Կապեալ սիւն լուսոյ
Կանգնեալ 'ի յերկնուստ։
Կոյսն"։

Կարևոր խրմբից .
Կանչեն 'ի յերկնից. .
Կենարար ծընաւ
Կեցուցիչ բաղմաց։
Կոյսն"։

Կերպ մի 'ի գընդէն
Կարգ մի 'ի թուոցն,
Կանչեն առ Հովիւսն
Կարևոր ազգմամբ։
Կոյսն"։

Կըրկնեալ առ նոսա
Կրթական մրտօք
Կարևոր յուսով
Կանխեալ 'ի յերկնուստ։
Կոյսն"։

Կանչէր կըրկնելով
Կարապետին մայրն.
Կաքաւէր փութով
Կարևոր պառաւն։
Կոյսն"։

Կորուսեալն Եւայ
Կողոպտեալ կենօք
Կանկնեցաւ կայուն,
Կայր մօտ առ Կուսին։
Կոյսն"։

Կշկոճեալ ոտիւք
Կորաւիտ կողօք
Կաղացեալ կենօք
Կուսին կորացեալ։
Կոյսն"։

Կարմրալար այտիւք,
Կապուտակ շրթամբք,
Կոճոպեալ հերօք,
Կայթէր արտասուօք։
Կոյսն"։

Կողկողեալ մարմնով
Կարկառէր զբազուկն,
Կրբճտէր զատամունս,
Կոծէր յոյժ ըղկուրծն։
Կոյսն"։

Կանչեալ մեծաձայն
Կոչէր զնախկին Հայրն.
Կանգնեալ Ադամայ
Ի կործանմանէն։
Կոյսն"։

Կողկողէր բազկօք
Կոչէր արտասուօք.
Կենարար Փրկիչ,
Կեցո զկորուսեալս։
Կոյսն"։

Կայթելով Հովուացն
Կոչ ասեն գառանցն.
Կապուտակ ուլիցն
Կումբ առեալ կայթեն։
Կոյսն"։

Կէտքն երկուցեալ,
Կայտառքն են սարսեալ.
Կարկեալ գետք 'ի դէմս
Կոծի ծով ալեօք։
Կոյսն"։

Կայր Տէրն 'ի վերայ
Կապուտակ գետոյն.
Կամէր մրկըրտիլ
Կարապետ բազկաւն։
Կոյսն"։

Կայր Հայր 'ի յերկինս
Կանչէր Մրկըրտչին.
Դա է իմ որդի
Կամաց կատարող։
Կոյսն"։

Կայր և սուրբ Հոգին
Կապուտակ ամպով,
Կայծակնագունով
Կերպիւ աղաւնոյ։
Կոյսն"։

Սրիկ Կոստանդին։

digitised by A.R.A.R.@